

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ԱՆԿԱԿ ԴԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑ ԴԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՃՅՈՒՂԵՐԻ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԿՈՌՊԵՐԱՑԻԱՅԻ
ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԵՎ ՄԵԽԱՆԻՉՄԻ ՄԱՍԻՆ

Սույն Համաձայնագրի մասնակից պետությունների կառավարությունները,
այսուհետ՝ Կողմեր,

ի կատարումն Մոսկվայում 1993 թվականի մայիսի 14-ին եւ սեպտեմբերի 24-ին
ընդունված Համագործակցության պետությունների ղեկավարների հորհրդի որոշումների,
ինչպես նաեւ Տնտեսական միության նպատակների եւ սկզբունքների ձեռքբերման համար,

հաշվի առնելով պետությունների գիտատեխնիկական եւ արտադրական ներուժի միջեւ
ձեւավորված տեխնոլոգիական փոխկապակցվածությունները,

ճանաչելով Համագործակցության մասնակից պետությունների տնտեսվարող
սուբյեկտների ուղղակի արտադրական փոխգործակցության դերը շուկայական
հարաբերությունների հիման վրա ընդհանուր տնտեսական տարածության ստեղծման
գործում,

ձգտելով ապահովելու բարենպաստ պայմաններ Համագործակցության շրջանակներում
ձեռնարկությունների եւ ճյուղերի միջեւ արտադրական կոոպերացիայի եւ ուղղակի
կապերի պահպանման ու փոխշահավետ զարգացման համար, համաձայնեցին ներքոհիշյալի
մասին.

ՀՈՂԱԾ 1

Կողմերը գործուն միջոցներ կձեռնարկեն սեփականության բոլոր ձեւերի
ձեռնարկությունների, ճյուղային եւ միջճյուղային համալիրների միջեւ
կոոպերացիայի իրականացման եւ զարգացման պետական օժանդակության ապահովման համար
դրանց արտադրական ուղղակի կապերի հիման վրա, ինչպես նաեւ
ֆինանսաարդյունաբերական խմբերի եւ անդրազգային արտադրական միավորումների,
համատեղ ձեռնարկությունների շրջանակներում:

ՀՈՂԱԾ 2

Կողմերը կվարեն համաձայնեցված քաղաքականություն արտադրության միջազգային
մասնագիտացման եւ կոոպերացիայի, դրանց իրականացման պայմանների զարգացման
բնագավառում.

արդյունաբերության ճյուղերում առաջնայնությունների սահմանում,
օժանդակություն համատեղ նախագծերի եւ ծրագրերի մշակմանը եւ իրականացմանը,
արտադրության բազմակողմանի համակարգման անցկացում, ներառյալ պաշտպանական
ճյուղերի կոնվերսիան:

ՀՈՂԱԾ 3

Կողմերը համաձայնեցին, որ.

կոոպերացիայով ապրանքների մատակարարման ներքո հասկացվում են ճյուղային եւ
միջճյուղային նշանակության հումքի, նյութերի, սարքերի, պահեստամասերի,
կիսաֆաբրիկատների, համալրող եւ այլ սարքերի մատակարարումներ, որոնք
տեխնոլոգիապես փոխկապակցված եւ անհրաժեշտ են վերջնական արտադրանքի համատեղ
պատրաստման համար,

ծառայությունների տրամադրում ասելով, հասկացվում է նախագծային,
վերանորոգման աշխատանքներ, տեխնիկական սպասարկում եւ տեխնոլոգիական
գործողություններ,

ապրանքների մշակման մաքսային ռեժիմների շրջանակներում մատակարարումներ
ասելով, հասկացվում է, Կողմերի մաքսային օրենսդրություններով սահմանված

պայմաններին համապատասխան, ապրանքների մատակարարումներ, եթե այլ բան չի նշված սույն Համաձայնագրում:

ՀՈՂՎԱԾ 4

Կողմերը ճանաչում են, որ արտադրական կոոպերացիայի եւ ուղղակի կապերի հիմնական շղթան են հանդիսանում պայմանագրերը (կոնտրակտները), որոնք կնքվում են տնտեսվարող սուբյեկտների միջեւ համապատասխան միջկառավարական, ճյուղային եւ միջգերատեսչական համաձայնագրերի հիման վրա եւ մինչեւ մաքսային միության ստեղծումը հիմք են ծառայում մաքսային մարմինների կոոպերացիայով մատակարարվող սահմանը հատող ապրանքների անցման համար: Ապրանքների մաքսային ձեւակերպումը իրականացվում է սույն Համաձայնագրին համապատասխան եւ Կողմերի մաքսային օրենսդրություններով նախատեսված կարգով:

ՀՈՂՎԱԾ 5

Կողմերը պարտավորվում են չկիրառել ներմուծման եւ արտահանման տուրքեր, հարկեր, ակցիզներ եւ քանակական սահմանափակումներ կոոպերացիայով մատակարարվող ապրանքների նկատմամբ վերամշակման մաքսային ռեժիմների շրջանակներում:

Կողմերը պայմանավորվեցին, որ իրենց իրավասու կազմակերպությունները կմշակեն տվյալ հոդվածի գործողության կոնկրետ կարգ:

ՀՈՂՎԱԾ 6

Սպառազինության եւ ռազմական տեխնիկայի արտադրության համար նախատեսված հատուկ համալրող առարկաների, ինչպես նաեւ այլ առանձնահատուկ ապրանքների մատակարարումների կարգը, որոնք ենթակա են ոչ սակագնային կարգավորման սահմանված միջազգային երաշխիքների պահպանման նպատակով, սահմանվում է առանձին միջկառավարական համաձայնագրերով:

ՀՈՂՎԱԾ 7

Կողմերը չեն խոչընդոտի իրենց բանկերում հաշիվների բացմանը, իրենց ազգային օրենսդրությամբ նախատեսված կարգով եւ ժամկետներում: Կողմերը համապատասխան կազմակերպություններին կհանձնարարեն աշխատանքներ իրականացնել օրենսդրության եւ տնտեսվարման պրակտիկայի մերձեցման բնագավառում:

Կողմերը համաձայնեցին ձեռնպահ մնալ ազատ փոխարկելի արժույթով մատակարարվող ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) համար վճարման պահանջներից:

ՀՈՂՎԱԾ 8

Կողմերը ելնում են նրանից, որ սույն Համաձայնագիրը կնքած կողմերի ձեռնարկությունները իրացնում են նրանց կողմից արտադրած արտադրանքը (աշխատանքները, ծառայությունները) միմյանց միջեւ համաձայնեցված գներով:

Կողմերը պայմանավորվել են ապահովել սույն Համաձայնագրի 3-րդ հոդվածում նշված արտադրանքի եւ ծառայությունների մատակարարման համար հաշվարկների անխափան իրականացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը:

Փոխադարձ հաշիվների բացման եւ վարման կարգը սահմանվում է Կողմերի կենտրոնական (ազգային) բանկերի միջեւ պայմանավորվածությանը համապատասխան:

ՀՈՂՎԱԾ 9

Կողմերը, անհրաժեշտ դեպքերում, կհամաձայնեցնեն գիտատար արտադրություններում եւ արտահանմանը կողմնորոշված ճյուղերում կոոպերացիայի

գարգացումը, ինչպես նաեւ ներմուծման արտադրանքի թողարկումը խթանող վարկերի եւ ներդրումների տրամադրման պայմանները:

ՅՈՒՎԱԾ 10

Կողմերը պայմանավորվեցին այն մասին, որ սույն Համաձայնագրի շրջանակներում մատակարարվող հումքը, նյութերը եւ համալրող առարկաները ենթակա չեն երրորդ երկրներ վերաարտահանելու, այդ թվում՝ օտարերկրյա ֆիզիկական, իրավաբանական անձանց կամ միջազգային կազմակերպություններին՝ առանց մատակարարող պետության լիազոր մարմնի գրավոր համաձայնության:

ՅՈՒՎԱԾ 11

Կողմերը պայմանավորվեցին արտադրական ոլորտում ինտեգրացիոն գործընթացների զարգացման նպատակներով հաջորդական աշխատանք տանել տնտեսվարող սուբյեկտների վերաբերյալ ազգային օրենսդրության նորմերի համակարգման եւ մերձեցման ուղղությամբ, կապված ձեռնարկությունների եւ ճյուղերի կոոպերացիոն կապերի կարգավորման հետ:

ՅՈՒՎԱԾ 12

Կողմերը կազմակերպում են հետեւյալ հիմնախնդիրների համատեղ լրամշակումը. երկարաժամկետ արտադրական կոոպերացիայի մասին նմուշային պայմանագրերի եւ համաձայնագրերի մշակում, մարքեթինգային, լիզինգային հետազոտությունների անցկացում եւ ցուցահանդեսների կազմակերպում, գովազդային ծառայությունների տրամադրում, Համագործակցության մասնակից պետությունների եւ այլ շահագրգիռ պետությունների միջեւ գործընկերների որոնման, պայմանագրերի (կոնտրակտների) պատրաստմանը, կնքմանը եւ կատարմանը օժանդակություն ապահովող ժամանակակից տեղեկատվական հաղորդակցությունների զարգացում, մասնագետների պատրաստման համար համատեղ միջոցառումների իրականացում:

ՅՈՒՎԱԾ 13

Սույն Համաձայնագիրը ենթակա է վավերացման Կողմերի սահմանադրական ընթացակարգերին համապատասխան եւ ուժի մեջ է մտնում ավանդապահ պետությանը երրորդ ծանուցումը հանձնելուց հետո:

Վավերագրերը հանձնվում են սույն Համաձայնագրի ավանդապահին՝ Բելառուսի Հանրապետության կառավարությանը: Ավանդապահը ծանուցում է բոլոր պայմանավորվող Կողմերին եւ միացած պետություններին ի պահ հանձնված յուրաքանչյուր փաստաթղթի մասին:

Սույն Համաձայնագիրը բաց է Անկախ Պետությունների Համագործակցության ցանկացած մասնակից պետության, ինչպես նաեւ Համաձայնագրի դրույթները ընդունող երրորդ երկրների կողմից միանալու համար՝ Համաձայնագրի մասնակիցների համաձայնությամբ:

ՅՈՒՎԱԾ 14

Սույն Համաձայնագիրը կնքվում է անսահմանափակ ժամկետով: Կողմերը կարող են չեղյալ հայտարարել Համաձայնագիրը: Չեղյալ հայտարարումն ուժի մեջ է մտնում համապատասխան հայտարարություն կատարած Կողմի համար՝ մյուս Կողմերին ուղարկված հայտարարության ստացումից վեց ամիս հետո:

Կատարված է Ազգաբաղ քաղաքում 1993 թվականի դեկտեմբերի 23-ին, մեկ

բնօրինակով՝ ռուսերեն: Բնօրինակը պահվում է Բելառուսի Հանրապետության
կառավարության արխիվում, որը սույն Համաձայնագիրը ստորագրած պետություններին
կուղարկի դրա հաստատված պատճենները:

* Համաձայնագիրը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1997
թվականի ապրիլի 8-ից: